ՆՈՐ-ԴԱՐ

№ 141 ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ 7 Օգոստոսի — 1898 — Ուրբաթ 7 Օգոստոսի ՏԱՍՆԵՒՀԻՆԳԵՐՈՐԴ ՏԱՐԻ № 141

Տարեկան՝ 10 ռուբլի, վեց ամիսը 6 ռուբլի, երեք ամիսը՝ 3 ր. 50 կ.
Թիֆլիսում ամիսը՝ 1 ռ., հատով 5 կ.
Բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատունը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ, Редакція „Норъ-Даръ“
կամ Tiflis, Rédaction „Nor-Dar“

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի ազգ. օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով։ Յայտարարութիւնների բառին՝ 2 կ., տեկստերի համար՝ կրկնապատիկ

Կատարեալ Սողոմոնեան Ռոտինեանը որդոց և փեսաների հետ, Մարկիան և Աղէքսանդր Դաւթեան Ռոտինեանները յաւէտ սրտի յայտնում են աղգականներին և ծանօթներին՝ առաջինը իւր ամուսնու, երկրորդներն իրենց հօր, երրորդներն իրենց անօր և վերջիններն իրենց եղբօր

ՅՈՎՀԱՆՆԷՍ ԴԱՒԹԵԱՆ ՌՈՏԻՆԵԱՆԻ

մահը։ Հոգեհանդիստ կրկնասրտի ուրբաթ՝ օգոստոսի 7-ին և շաբաթ՝ օգոստոսի 8-ին, երեկոյեան ժամը 7-ին։ Թաղման օրուայ մասին կը յայտարարուի առանձին։
(1076) 2—2

ՔՐՈՆԻԿՈՆ

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Ա ռ ա ջ ն ո ր դ ո ղ. — Թիւրքիայի մասին։

Ք ր ո ն ի կ ո ն.—Լուրեր։

Մ ե զ գ ր ւ ում են.—Դիլիջանից, Դարալագեազից, Բագուից։

Կ. Պոլսի հայ թերթերից։

Հաւատափոխ ալերալը։

Երկաթուղին Արարատեան երկրում։

Նամակ խմբագրութեան։

Բաց նամակ պ. բժ. Արամեանցին։

Թ ղ թ ա կ ց ո ւ թ ի ւ ն ն ե ր.—Զամշադին։ Բագու։ Նամակ Ֆրանսիայից՝ Պարիզ։

Ք ա ղ ա ք ա կ ա ն. — Զինատան և պետութիւնները։ Սեամ։ Սպանիա։ Ֆրանսիա։ Թիւրքիա

Խ ա ն ն լ ո ւ ր ե ր։

Հ ե ռ ա գ ր ն ե ր։

Տ ե ղ ե կ ա տ ու։

Յ ա յ տ ա ր ա ր ո ւ թ ի ւ ն ն ե ր։

Թիֆլիս, 6 օգոստոսի 1898 թ.

ԹԻԻՐՔԻԱՅԻ ՄԱՍԻՆ

—

Ֆրանսիական «Temps» թերթը ֆրանսիական այժմեան (Բրիսոնի) մինիստրութեան միջոցին դադարելով մինիստրութեան բերան լինելուց, մի յարձակողական յօդուած է հրատարակել Թիւրքիայի կառավարութեան դէմ, որի ծայրն ուղղուած է Գերմանիային։

Այդ յօդուածը կրում է Թիւրքիա, Եւրոպա և երրորդ աւազակ վերնագիրը, որի բովանդակութիւնն հրատարակեցինք «Նոր-Դար»-ի նախընթաց (№ 139) համարի քաղաքական բաժնում։

«Մալիմաթ» լրագրում սուլթանի քարտուղարը, մի ռուս լրագրի Փերզանի շրջանում տեղի ունեցած մահմեդական յանդուգն ապստամբների դէմ արած զատողութեան առթիւ՝ ասում է, այդ Ռուսիան մահմեդականներին սրով ճնշելով քաղաքակրթութեան համար սկանդալ կլինի, այսինքն այն կլինի, ինչ որ Գլադստոնի ասելով Թիւրքիան էր Բուլղարիայի վերաբերութեամբ։

Ֆրանսիական «Temps» թերթն ապշած հարցնում է, թէ որտեղից է Թիւրքիան այդ համարձակութիւնն ստացել, որ Սուլթանի քարտուղարը կարողանում է այդպիսի լեզուով խօսել, և այդ այն սուլթանի քարտուղարը, որ վերջերս իսկ չէր կարողանում իւր խեղճ գոյութիւնը պահպանել։

Ֆրանսիական լրագիրը զարմացած հարցնում է, թէ որտեղից է Թիւրքիան այդ ոյժն ստացել, որ կարողանում է դիմադրել Ֆրանսիայի, Անգլիայի և Իտալիայի հաւաքական պահանջին, որով զրանք հայկական խառնակութեան միջոցին իրենց հպատակների կրած վնասների համար փողով հատուցումն են ուզում։

Ֆրանսիական լրագիրը Թիւրքիայի կողմից ցոյց տուած այդ քաջութիւնը և դիմադրութիւնը բացատրում է Գերմանիայի կողմից Թրքական կառավարութեան ցոյց տուած աջակցութիւնով, որը և շահաւէտ աղբիւր է գերմանացիների համար։

Մենք կարծում ենք, որ այդ վերջին հանգամանքն է զայրացրել երբեմն մինիստրական բերան «Temps» թերթին, որ այնքան խիստ լեզու է բանեցնում այն Թրքական կառավարութեան դէմ, որին միշտ պաշտպանել է ֆրանսիական կառավարութիւնն ամենամեծ բարբարոսութիւնների միջոցին։

Նախ Թրքական կառավարութիւնը որտեղից և ինչ դումարից պիտի հատուցանէ Ֆրանսիայի հպատակների կրած վնասները, եթէ իւր հպատակ քրիստոնեաների վրայ չծանրանայ նորանոր հարկերով։

Կարծում ենք, որ ոչ մի սուլթան Ֆրանսիայից այնքան պատիւներ և պաշտպանութիւն չի գտել, ինչպէս այժմեան սուլթանը իւր կառավարութեան վերջին 3 – 4 տարուայ ընթացքում։

«Temps»-ը նեղացած է, որ Թիւրքիայից այժմս օգտուողը միմիայն Գերմանիան է... այդ զայրոյթը, այդ եռանդը կարելի էր հօ մի փոքր աւելի լաւ գործի համար արտայայտել։

Գերմանիան շարունակում է այն, ինչ որ Ֆրանսիան սկսել է։ Եթէ Բալկան թերակղզու քրիստոնեաներին օգնող եղել է, այդ Ռուսիան է եղել։

Օգոստոսի 1-ից ց31-ն ղեկտեմբերի «Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում եւ վճարում են 5 ռուբ.։

Կարսից մեր ստացած տեղեկութիւններից երևում է, որ հայ գաղթականներից էրզրումցիները բոլորն էլ վերադառնում են իրենց քաղաքը։

—

Կառավարիչ Սենատը պարզարանել է այն հարցը՝ թէ արդեօք կուսակրօնութիւն ընդունողները պահում են իրենց իրաւունքը դրամագլխի կամ շարժական այլ իրերի վերաբերմամբ։ Սենատն այն եզրակացութեանն է եկել, որ կուսակրօնութիւն ընդունողները զրկում են իրենց բոլոր շարժական ու անշարժ կայքերից, եթէ մինչև այդ ժամանակ իրենց ունեցածի մասին կարգադրութիւն չանեն։

—

Ալէքսանդր II-ի արձանի բացման ժամանակ Մոսկուա քաղաքը զարդարելու և այլ ծախսերի համար այնտեղի քաղաքային խորհուրդը քաղաքային վարչութեան կարգադրութեանն է յանձնել 50,000 ռուբլի։

—

Կովկասի դանդան քաղաքներից Թիֆլիս են հաւաքուել պատգամաւորներ, որոնք այս օրերս ուղևորուելու են Մոսկուա՝ ներկայ լինելու Ալէքսանդր II կայսրի արձանի բացման հանդէսին։

—

Օգոստոսի 5-ին Թիֆլիսից Կոջոր մեկնեց նահանգապետ պ. Բիկովը։ Նա իւր գնալուց առաջ նահանգի բոլոր գաւառապետներին կարգադրել էր, որ իրենց իշխանութեան տակ եղած բոլոր զրադարան-ընթերցարանների կանոնադրութիւնը իրեն ներկայացնեն։

—

Թիֆլիսի վրաց սեմինարիայի տեսուչ Սերգիմ վարդապետը վաղը, օգոստոսի 8-ին, Թիֆլիսից հեռանալու է Պետերբուրգ, ուր եպիսկոպոսական աստիճան ստանալով Ռուսիայի ներքին նահանգներից մէկի առաջնորդ պիտի նշանակուի։

—

Ներկայումս Թիֆլիսումն է Կարսի զինուորական նահանգապետ գեն.-մայոր Օղինցովը։

—

Մայրաքաղաքի լրագրներն հաղորդում են, թէ Պետերբուրգի զանազան հաստատութեանց մէջ ծառայող ինտելիգենտ կանանց մի խումբ կարճ ժամանակից յետոյ պէտք է բաց անի առանձին բիւրօ, որ կրելու է «Կանանց աշխատանք» անունը. բիւրոյի նպատակը լինելու է պարապ մնացած ինտելիգենտ կանանց համար գործ ճարել և միանուագ նիւթական օգնութիւն հասցնել։ Իսկ փորձնական զրաղմունքների համար էլ մտադիր են բիւրոյին կից բաց անել՝ կանանական զրաղմունքների, ձեռագործութեան և նկարչութեան կուրսեր։

—

«Պետ. Վեդ.»-ին հաղորդում է, որ ներկայումս պատշաճաւոր իշխանութեան մէջ հարց է բարձրացել այսուհետև դեղագործի կրթութիւն չունեցողներին թոյլ չտալ դեղատներ շահագործելու և կապալով վերցնելու։

—

Երկրագործութեան մինիստրութեան մէջ առանձին յանձնաժողով է կազմուած, որը պէտք է քննի հողաւէրերին փոխառութիւն տալու հարցը։ Փոխառութիւն տալու նպատակն է նրանց հողը և ունեցածները անբերրութեան տարիներում բարեկարգ վիճակի մէջ պահելը։

—

Երկրագործական դեպարտամենտում նոր ծրագիր է մշակւում մի բարձրագոյն ուսումնարանական հաստատութիւն հիմնելու, ուր պիտի պատրաստուին մասնագէտ կթնատնտեսներ։

—

Պետերբուրգում քիմիական-տեխնիկական ուսումնարան բաց անելու հարցն արդէն մշակուած է պատշաճաւոր վարչութեան մէջ։ Սոյն ուսումնարանում կընդունուին քաղաքային դպրոցն աւարտողները։

—

Օգոստոսի 1-ին պատահած երկրաշարժը, «Նով.-Օր.»-ի թղթակցի ասելով, բաւական մնաս է տուել Ախալքալաքի գիւղերում և մեծ սարսափ է տարածել գիւղացի ժողովրդի մէջ։ «Կաւկազ»-ի ասելով նոյնն է պատահել նաև Ալէքսանդրապոլում ու իւր շրջակայ գիւղերում։

—

Ղզլարում պատահած աղէտի միջոցին երեք բանուոր է խեղդուել, որոնք աշխատելիս են եղել գետի պատնէշի պատրուակ տակ։

—

Օգոստոսի 5-ին, թաղական խորհրդի բժիշկները քննեցին Թիֆլիսի ծծմբային բաղանիների քիսաչիներին, որոնց մէջ սիֆիլիսով վարակուած երեք հոգի գտան և նրանց խիստ առանձնացրին։

Հողացողներն իրենց առողջութիւնը վտանգի չենթարկելու համար՝ այսպիսի դէպքերում պէտք է խիստ զգոյշ լինեն։

——

ՄԵԶ ԳՐՈՒՄ ԵՆ

ԴԻԼԻՋԱՆԻՑ. —Պէտք է արձանագրենք մի դէպք, որ վրդովել է մի ամբողջ հասարակութեան խաղաղութիւնը։ Մի բազուեցի պարոն, Յ. Ս. փախչելով Բագուի անտանելի եղանակներից, եկել էր Դիլիջան ամարանոցը, ոչ թէ օգտուելու զով օդից և առողջարար ջրից, այլ աղջիկ փախցնելու դիտաւորութեամբ։ Նա յաջողեցնում է ոտք կոխել մի գիշեր, ժամը 12-ին, իւր աչք տնկած աղջկայ հօր բնակարանի դուռը, բայց չնորհիւ տան տէր դիլիջանցի պարոնի, այնպիսի մի քեօշմակ է ուտում, որի մասին օրումը լսած չի լինիլ. և այդպիսով աղջիկն ազատւում է այդ գազանից։ Պարոնը երիտասարդ չէ, այլ հասակաւոր անձն և ամուսնացած. կինը տղնիւ տիկին է, պատուաւոր ընտանիքի զաւակ։ Բայց այդ դէպքը բաւական չէ. դէպքի հետեւեալ օրը դատաստանական ատեանին է դիմում իրեն ֆիղիքապէս վիրաւորողներից պատիւ պահանջելու և դեռ այս գանգատի ելքը չիմացած, երրորդ օրը հասարակութեան դրօսավայրում (ռոթմնդ) օրը ցերեկով սուրը (բէհրութ) ձեռքին՝ յարձակւում է իւր վախցնելիք օրիորդի բարեկամներից մէկի վրայ, որը իրաւունք էր համարել աղջկայ պատիւը պաշտպանել (նա էլ էր ծեծել պարոնին)։ Այս երկրորդ դէպքից յետոյ տեղիս գաւառապետ պ. Կանչելին հրամայում է անմիջապէս հեռացնել նրան և մի կազակի հսկողութեան ներքոյ՝ ճանապարհ է դնում դէպի Բագու։

—

ԴԱՐԱԼԱԳԵԱԶԻՑ. — Յուլիսի 3-ին հոգին յանձնուեց վաղաժամ Քրիստափոր Տէր-Միքայէլեանի մարմինը Դարալագեազի ս. Խաչ վանքում։ Հանգուցեալը մտել էր անցեալ տարին ճեմարանի Ա. լսարանը և մեծ աշխատասիրութեամբ իւր քաղցր ու հեզ բնաւորութեամբ դէպի ինքն էր գրաւել ամենքի ուշադրութիւնն ու սէրը։

Յունիսի սկզբին Բ. լսարանը փոխադրուելուց յետոյ, հանգուցեալն հրապուրւում է արժ. Դարեգին վ. Յովսէփեանի հետ Դարալագեազ ճանապարհորդելու. բոլորը լինում են 12 աշակերտ։ Մինչև Ղամարլու կառքով գնալուց յետոյ, սկսում են սատկիկ շոգերով ոտով գընալ։ Այդ յոգնեցուցիչ և վտանգաւոր ճանապարհորդութեան միջոցին, հանգուցեալը մրսում է և ամսի 23-ից սկսած մեծ դժուարութեամբ է շարունակում իւր դժբաղդ ճանապարհը։ Նա սկսում է տաքացնել (տիֆի տենդով) և փոխանակ յետ ուղարկուելու, գնում է ս. Խաչ, հայր սուրբի ձիով և այնտեղ պառկում։ Ամսի 28-ին գալիս է և հայր սուրբը, նամակով խորհուրդ է հարցնում բժշկից, քինաքինա է տալիս շարունակաբար և երբ սկսում է դէլը տալ, մարդ է ուղարկում բժշկի յետևից որև մահուան ճգնաժամին է հասնում։

—

ԲԱԳՈՒԻՑ. — Օգոստոսի 3-ին, երեկոյեան ժամը 6-ից անձրև սկսեց, որը և շարունակւում է։ Եղանակները ոչ միայն հով են, այլ և մարդ մրսում է։

—Յաջորդ օրն է, որ ոստիկանապետ իշխան Վոլկոնսկին բացակայ է քաղաքից իւր սեպհական գործերով, և հէնց այժմեանից նկատւում է, որ քաղաքը նախկին խառը դրութեան և կեղտոտութեան մէջն է ընկնում...

Կ. ՊՈԼՍԻ ՀԱՅ ԹԵՐԹԵՐԻՑ

Ս. Հայրապետական ամուսնական ինչ խնդիրներու վրայ տեղեկութիւններ ուղած ըլլալով, Կրօնական Ժողովը իր երէկի նիստին մէջ որոշեց այս մասին իր կարծիքն ու տեսութիւնները մատուցանել։ Ժողովն աչքէ անցուց նոյն մաքով պատրաստուած զիրը և որոշեց յառաջիկայ նիստին վերջնական ընթերցումը կատարել յետոյ զրկել Ն. Ս. Օծութեան։

—Դատական գործոց Բարձ. Նախարարը պաշտօնագիր մը ուղղելով, Պատրիարքարանի տեղեկութիւններն ու կարծիքը ուղած էր այն հայ որբերուն նկատմամբ, որոնք տարուած էին Իտալիոյ Անքոնա քաղաքին մէջ նոր հաստատուած որբանոցը։ Քաղաք. ժողովը ուշադրութեան առնելով թէ Եւրոպիոյ և թէ օսմանեան երկրին մէջ օտար որբանոցները տարուած երկսեռ հայ որբերու վիճակը և լսելով այս մասին Ս. Նախագահ հօր տեղեկութիւններն ու տեսութիւնները, որոշեց հարկ եղած պատասխանը տալ կայս. կառավարութեան։

—Ասկէ մէկ քանի ամիս առաջ Հայոց և Յունաց պատրիարքարաններուն մէջ խառն ամուսնութիւններու մասին կարգադրութիւն մը ընելու համար բանակցութիւններ կը կատարուէին, և երկու պատրիարքարաններու փոխանորդներ քանիցս իրարու այցելութիւններ տալով խորհրդակցութիւններ կատարեցին, բայց չի գիտցուիր, թէ այդ բանակցութիւնները ինչ բանի յանգեցան, միայն սա յայտնի է, թէ յունաց պատրիարքարանը անխափեր կը պահէ այն յոյները, որոնք արդէն հայ պսակով անգամ մը ամուսնացած և զաւակներ ունեցած ու յետոյ իրենց ամուսինը երեսի վրայ թողլով ուրիշի հետ պսակուիլ ուզած են։ Կրօն. Ժողովը իր վերջին նիստին մէջ նմանօրինակ ինդրով մը զբաղեցաւ. Թօվ-

զափուցի ազգային մը Ժողովին ներկայանալով կը յայտնէր, թէ իւր կինը՝ յոյն աղջիկ մը, հայ եկեղեցիի պսակով իրեն հետ ամուսնացած և զաւակներ ալ ունենալէ ետք, այս անգամ առանց պատճառի իր զաւակները և ամուսինը թողլով՝ կրկին յունաց պատրիարքարանը դիմած և ուրիշի մը հետ ամուսնանալու համար հրամանագիր մը կորզել յաջողած է. յիշեալը՝ իրաց այս վիճակին մէջ կը խնդրէր, որ իրեն ալ կրկին ամուսնանալու հրաման տրուի։ Պրօնական Ժողովը ցաւով տեղեկացաւ խնդրին մանրամասնութեանց և այս մասին վերջնական որոշում մը տալը առաջիկայ նստին թողուց մեծամասնութիւն չունենալուն համար։

ՀԱԻԱՏԱՓՈԽ ՏԷՐՏԷՐԸ

Վանից յուլիս 1 թուականով գրում են «Մասիս»-ին.

«Ինչպէս քանի քանի անգամներ հրատարակուած է լրագիրներուն մէջ և Ազգ. Պատրիարքարան ալ տեղեկագրուած, կաթոլիկութեան յարելու հասանքը ուշագրաւ կերպով կը ծաւալի մեր մէջ այստեղ։ Պրօնափոխ հայոց թիւը, քաղքին և գիւղերուն մէջ, 5—600 տունի չափ կը հաշուի։ Զմոռնանք սակայն աւելցնել որ այս թիւը հետզհետէ կը նուազի, երբ ցանքերը հասնին ու նպաստները վերջանան։

Այգեստանի Արարուց եկեղեցիի թեմերէն Կլոր-Դար կոչուած խառն ազգաբնակ թաղին աղքատ ազգայինները, հարիւր տունի չափ վերջերս կաթոլիկութիւնը ընդունեցին։ Ասոնց համար նոյն թաղին մէջ տուն մը վարձուելով մատուռի վերածուեցաւ։ Եւ ասոնց հովուութիւնը իր վրայ առաւ... տէրտէր մը,—երեք ամիս առաջ Սեան գիւղին վրայ ձեռնադրուած Անգղցի Արսէն քահանան, որ ինքն ալ կաթոլիկ եղաւ եւ մատրան քահանայութեան հետ ստանձնեց նաև հաւատափոխ ազգայիններուն հոգևոր ներկայացուցչի պաշտօնը։

«Այդ քահանան՝ իր և իրեններուն արարքը նուիրագործելու համար՝ լատինական ծէսով առաջին հանդիսաւոր կամ ձայնաւոր—պատարագը պիտի մատուցանէր յունիս 21-ի կիրակին, Կլոր-Դարի նոր մատրան մէջ, յատկապէս պատրաստուած զգեստներով։ Ճակատագիրը չներեց սակայն որ նորընծան իր այդ փափագին հասնի։ Ցանկարծական կերպով, ուղեղի խանգարման նշաններ եկան վրան և հետզհետէ այնքան ծանրացան, որ հարկ եղաւ ձեռքը, ոտքը կապելով կառքի մը մէջ փակել ու ղրկել իր բնիկ գիւղը, ուր ողորմելի վիճակի մը մէջ կը գտնուի, կ'ըսեն։

Այս դէպքը մեծ սրտայուզում առաջ բերաւ ոչ միայն իր հաւատափոխ գիւղացիներուն մէջ, այլ և դանոնք հմտողց Փրոտեսներուն վրայ։

Անցեալ կիրակի, յունիս 28, առաջն. տեղապահ Տ. Ստեփան վարդապետ Սարբը եկեղեցին իջնելով, հաւատափոխ ազգայիններուն նկատմամբ շատ ազդու քարոզ մը խօսեցաւ և ժամերգութեանց աւարտումէն ետք Թաղ. Խորհրդի սենեակը հրաւիրեց զանոնք. հոն՝ մտերմաբար հարկ եղած յորդորները տալէ վերջը, խոստացաւ անոնց նիւթական անձկութիւնները մեղմելու համար կարելի եղած դարմանը տանիլ, դիմելով Վանայ կուսակալին ու Ս. Պատրիարք Հօր։

Ճշմարտութենէ չշեղելու համար, աւելցնենք թէ Արարուց եկեղեցիի քահանաներուն անկարելիը ու թոյլ ընթացքին դէմ թաղեցիներուն ունեցած դանդաղութիւնը անիրաւ չէին։»

ԵՐԿԱԹՈՒՂԻՆ ԱՐԱՐԱՏԵԱՆ ԵՐԿՐՈՒՄ

Երբ սկսուեց կառուցուել Ղարս-Ալէքսանդրապոլի երկաթուղին, Արարատեան երկրի ժողովուրդն անսահման ուրախութեամբ ընդունեց այդ նորութիւնը, զուշակելով որ արդէն մօտեցել է այն երջանիկ օրը, երբ Մայր արաքսի ափերում, Արարատեան երկրի հովիտներում պիտի լսուի երկաթուղու աւետարեր սուլոցը։

Արարատեան երկրի նման բնութեան անսահման առատ բերքերով աչքի ընկնող մի երկրի համար՝ վաղուց զգալի էր երկաթուղու անհրաժեշտութիւնը։ Եւ չնայելով երկրի այդ հարստութեանը, այնտեղ արդիւնաբերող տարրը, համեմատած իւր երկրի և հողի ուժեղ և բերքի յատկութեան հետ, թոյլ է և անզօր, մանաւանդ, որ մեծամասնութիւնն ագքատ է, և դրա միակ պատճառն այն անհպատ պայմաններն են, որոնցով շրջապատուած է այդ տարրը արտահանութեան և ճանապարհների ամենադժուարին հաղորդակցութիւնների պատճառով։

Իսկ ներկայումս, երբ արդէն հաստատ է Արարատեան երկաթուղու կառուցումը Ալէքսանդրապոլից Երևան և այնտեղից Ջուլֆա, առատաբերք այդ երկիրը երկաթուղու հաղորդակցութիւն ունենալով մի կողմից դէպի արտասաքսման և միւս կողմից դէպի Ռուսիայի այլ և այլ քաղաքները, կարճ ժամանակում խիստ առաջ պիտի գնայ առևտրական-արդիւնաբերական և դրա հետ կապուած լուսաւորութեան տեսակէտից։

Ճանապարհների վատ հաղորդակցութեան պատճառով Երևանի նահանգից, բացի բամբակից ու ալից (վերջինս շատ սակաւ), ուրիշ արդիւնաբերութիւն գրեթէ չի արտահանուում, որովհետև խիստ թանկ նստող ճանապարհավարձը բարդուելով արտահանուող բերքերի գնի վրայ, այդ բերքերն այլ ևս անկարող են դառնում մրցել ուրիշ երկրների արդիւնաբերութիւնների հետ։ Այդ բերքերն են՝ բրինձը, ցորենը, գարին, ոսպը, հաճարը, ամեն տեսակ ընդեղէնները, գինին, օղին և զանազան պտուղներ, որոնց նման ամենարնտիր տեսակները չունի և ոչ մի երկիր։ Այսպիսով արդիւնաբերող տարրը իւր ապրանքը ծախելու և օգուտուելու ոչ մի միջոց չգտնելով, դիզում է և նայում երեսին. իսկ իրեն համար ապրուստ, ուտելիք, հագնելիք է հարկաւոր։ Նա ճարահատեալ ձի է առնում և սկսում շարվաղարութիւն անել, իւր ապրանքը տեղափոխել այս գիւղ, այն գիւղ մի կերպ սաղացնելու համար. իսկ ինչ վնասներում է բամբակին և այլ խոշոր արտահանութիւններին, դրանց մէջ էլ արդիւնաբերողը ոչ մի շահ չի գտնում, որովհետև ներկայ հանգամանքներում դուրս են ընկել խոշոր մանկ ու մարդկանց աչքի իւղ թրջոցող այնպիսի վաճառականներ, որոնք ոչ այլ ինչ են, եթէ ոչ շարշիներ և որոնք այդ ապրանքը ձեռք են բերում այնպիսի գներով, որ գիւղացին ոչ մի օգուտ չի ստանում։ Բայց երբ կըգայ երկաթուղին, արտահանողն ինքը կարող է վաճառել իւր ապրանքը հեռաւոր քաղաքներում. գնող այնքան կըլինի, որ ապրանքը մինը միւսի ձեռքից կը խլեն, վաճառողն էլ կօգտուի, առնողն էլ։

Այսպիսով արդիւնաբերութիւնը կըսկըսուի ուժեղանալ, ժողովուրդը կըդառնայ ուժեղ կուլտուրայի տէր և աշխատող տարր։

Բայց մի հանգամանք, որ մի մեծ խոչընդոտ է հանդիսանում. դա այն է, որ երկաթուղին, ինչպէս երևում է առաջին նախագծից, կանգնում է Երևանից 25 վերստ հեռու, իսկ երկրորդ նախագծով՝ 7 վերստ հեռու։ Դրանից առաջանում է նախ այն մեծ դժուարութիւնը, որ արտահանող տարրը չի ունենայ իւր ապրանքների վաճառման և արտահանութեան մի որոշ կենդրոնավայր։ Դրանով համարեա թէ ամբողջ Երևանի նահանգը կիսովին զրկւում է այն օգուտներից, որը կարող էր տալ երկաթուղին, եթէ նա կանգ առնէր ուղիղ Երևանի առաջ։ Եթէ երկաթուղին անցնում է Արարատեան նահանգովը առատարան շահերը և օգուտները աչքի առաջ ունենալով, ուրեմն աւելի ձեռնտու է ու շահաբեր, եթէ երկաթուղին կանգ կառնի Երևանի առաջ, և իւր կայարանները աշխատէ մատչելի դարձնել ամեն մի մեծ ու արդիւնաւէտ տաններ և գիւղերի համար։ Ամբողջ Արարատեան երկրում, սկսած Ղարսից, Ալէքսանդրապոլից, Ղազախի գաւառից, Նոր-Բայազիտից մինչև Թիւրքիայի սահմանները, այդ բոլոր կողմերի էլ առևտրական կենդրոնավայրը յիշւում է միմիայն Երևանը։

Երևանից են զուրս գալիս բոլոր երկրի անհրաժեշտ ապրանքները ու մթերքները, և այնտեղերից է Երևան գալիս այն ամենը, ինչ որ արդիւնաբերում է ժողովուրդը։ Այսպիսով Երևանն առևտրական տեսակէտից, գլխաւոր հիմքն է ու կենդրոնավայրը մի ամբողջ երկրի։ Արդ, ակնայայտ է, երբ երկաթուղին 25 կամ 10 վերստ հեռու պիտի կանգնէ այդ քաղաքից, ասել է թէ մի ամբողջ գաւառ և նահանգ ահագին դժուարութիւնների պիտի մատնուի, պիտի փակուին նրա առաջ աւելի յաջող և ճիշտ պայմանները։ Բոլոր երկրի ապրանքների արտահանութեան գլխաւոր կենդրոնները գալիս են Երևանում. Երևանն է ներս ընդունում և դուրս տալիս բոլոր մթերքները։ Ալէքսանդրապոլը, Ղարսն ապրում են Երևանով։ Այնտեղի վաճառականները միշտ Երևանի հետ գործ ունին, և ոչ մի նպատակ չի ունենալ, մինչև անգամ անհասկանալի կըլինի Արարատեան երկրում երկաթուղի անցկացնել ու Երևանը զրկել նրանից, որով քաղաքը կունենայ ահագին վնասներ։

Այս պատճառով երևանցիք, իրենց շահերը չվորցնելու համար, պէտք է աշխատեն և ամեն միջոց գործ դնեն երկաթուղու կայարանը դարձնել Երևանի «Միլեր»-ը, ուր արդէն այդ նպատակի համար վաղուց հող է յատկացրուած։ Պէտք է ի նկատի ունենալ այն ևս, որ եթէ մինչև անգամ երկաթուղու ճիւղ էլ բաց անեն, դա դարձեալ չի ունենալ այն օգուտները, ինչ որ կունենար հիմնական երկաթուղու հաղորդակցութիւնը։

Մ. Բագրատունի

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

Յարգոյ խմբագիր,

Երեկուանից մեր ծերունազարդ կոմիկ պ. Դ. Թուրեանը կաթուածահար է եղած, միանգամայն զուրկ՝ թէ խօսելու և թէ շարժուելու ընդունակութիւնից. յանձնուած է իւր նման ծերացեալ և անկարող ամուսնոյ խնամքին. դրութիւնը ծանր է։ Սորանով խնդրում եմ, ում հարկն է, որ յանուն մարդասիրութեան ուշադրութիւն դարձնեն. այլապէս «գնա՛ մեռիր, արի՛ սիրեմ» առածը յիմարութիւն կը լինի կրկնել։

Ա. Սարգարեան.

Թիֆլիս, 4 յուլիսի։

ԲԱՑ ՆԱՄԱԿ Պ. ԲԺ. ԱՐԱՄԵԱՆԻՆ

Մեծապատիւ Collega! «Նոր-Դար»-ի սոյն տ. № 36-ըդում Դուք՝ «ի դիմաց երջանկայիշատակ Կիւրեղ եպիսկոպոս Սրապեանի յիշատակի սրբութեամբ յարգող երախտագէտ աշակերտների և բարեկամների»՝ պահանջել էք զեր. Մեսրովբ արքեպիսկոպոս Սմբատեանից՝ «հրապարակ հանել փաստերը»՝ «սրբութեամբ յարգած» եպիսկոպոսից «ամբարտաւան» և բնաւորութեամբ խառնակիչ և խռովիչ» լինելուն։ Դուք աւելացնում էք՝ «եթէ դրամի կորստութիւն կայ հրատարակութեան համար, ես ինքս անձամբ կրհոգամ կարևոր ծախքը»։

Ես «ունիմ» և պարտաւոր եմ «հրապարակ հանել» Ձեր «պահանջած» «փաստերը»։ Ուստի՝ բարեհաճեցէք պատասխանել՝ կրհոգա՞ք արդեօք ունեցած «փաստերիս» հրատարակութեան կարևոր ծախքերը։ Հրատարակուելու է՝ 1,500 օրինակ, բաժանուելու է՝ ծրի։

Թոյլ եմ տալիս ինձ աւելացնել՝ «Նոր-Դար»-ի ս. տ. 36-ըդում նշանակած «ժամանակամիջոցդ»՝ «չորս ամսուայ ընթացքում»՝ ունեցած «փաստերիս» լոյս չտեսնելի ինձնից միանգամայն անկախ էր *)։

Հասցէս՝ մինչև ս. տ. սեպտեմբերի 15-ը՝ Нахичевань, Эриванской губ. ապա՝ Москва, Тверская ул. д. Манозова։

Բժիշկ Սիմէօն Զահ-Նազարեանց.

Հին-Նախիջևան, 30 յուլիսի։

ԹՂԹԱԿՑՈՒԹԻՒՆՆԵՐ

ՉԱՄՇԱԴԻՆ (Ղազախի գաւառ), 3 օգոստոսի. Չամշադնի թուրքերը հայերից ոչ լաւն են սովորել և ոչ վատը, իսկ հայերը թուրքերից սովորել են գողութիւն, անչափահասների ամուսնութիւն, մօտ ազգականների խնամութիւն և աղջիկ փախցնել, որը ներկայումս մեզանում սովորական բան է դարձել։

Այժմ հայ գիւղերում գողութիւնն այնքան տարածուած է, որ գիւղացիներից շատերը շարաթներով ու ամիսներով քարշ են գալիս դատարանների դռները, պրիստաւների ու գաւառապետի մօտ, փոխանակ իրենց տան գործերին լինելու։ Օր չի անցնում, որ մի սրէկ գիւղում գողութեան մասին բողոք չլինի։ Բայց սրանից 20—30 տարի առաջ այդպէս չէր։ Հայ գիւղացիներն ընդունում էին, որ գողութիւնը թուրքերի փեշակն է, դրանով միայն թուրքերը կարող են պարապել, այնպէս, որ թուրք լինի ու գող չլինի, դա անհաւատալի էր համարում, որովհետև գողութիւնը հայի անուանն անպատուաբեր էր և ընդունուած էր այս խօսքը՝ թէ «հայը կեղծութիւն չի անիլ, թուրքը կեղծութիւն կանի»։ Եւ զարմանում էլ էին, երբ լսում էին, թէ մի հայ գողութիւն է արել, իսկ այժմ՝ եթէ հարցնէք գողութեան մասին մի սրեիցէ բարեխիղճ գիւղացի ծերունու, նա ձեզ կըպատասխանի այսպէս. «Թուրքի անունն ա կտրած, համա հմի հայը նրանից ըէթար (վատ) ա»։

Կարելի է հաստատ ասել, որ ոչ մի տեղ այնքան տարածուած չէ անչափահասների ամուսնութիւնը, որքան Չամշադնի հայերի մէջ։ Այդ է պատճառը, որ այդ անչափահասներից ծնուածների մեծ մասը վախճանում է, և շատ քիչ կանայք կըգտնուին հայ գիւղերում ֆիզիկապէս առողջ. շատերը նոյնպէս ծաղիկ հասակում զոհ են գնում։ Այս է պատճառը, որ գիւղացիներից շատերը երկրորդ, երրորդ անգամ ամուսնացածներ են։

Իսկ շատ մօտ ազգականների խնամութեան մասին ընդհանրացած է այս կարծիքը թէ՝ «մի քիր ու ախպէր ա մնացել, որ իրար հետ պսակեն»։

Աղջիկ փախցնելուց էլ հեշտ բան չըկայ մեզանում։ Փախցնում է ամեն օր իրեն աչքը դրած աղջկանը՝ առանց մըտածելու հետեանքի մասին. և ամեն մի հայ գիւղում առնուազը 8—10 հոգի հեշտ կըգտնուին, որոնք այդպիսի միջոցներով են ամուսնացել։ Թէև այդ ամուսնութիւնն էլ դրանց շատ էժան չի նստում, նիւթական և բարոյական տհաղին վնասներ են կրում, ինչպէս իրենք են ասում, «քանդւում, հոգի հետ հաւասարւում», բայց էլի չեն խրատւում և ձեռք չեն վերցնում դրանից։

Համառօտապէս նկարագրելով Չամշադնի հայերի մէջ արմատացած այս ազգեղ երևոյթները՝ առանց դրանց մանրամասնութիւնների և պատճառների մէջը մտնելու, հաստատ կարող ենք ասել, որ ոչ կարկուտը, ոչ երաշտը, ոչ մուկը, ոչ մորեխը այնքան վնաս չեն տալիս մեր գիւղացիներին, որքան վերոյիշեալ երևոյթները։ Բայց ցաւալին այն է, որ այն անձերը, որոնք պէտք է դրանց առաջն առնեն, իրենք են ցանկանում, որ այդպիսի բաները շատ կրկնուեն, որպէս զի իրենք էլ մէջ տեղը շահուեն։

Թադուհի Մուրադեան.

ԲԱԳՈՒ 3 օգոստոսի. — Որքան էլ գիւղած միլիոններ ունենանք, վաճառականական առպարիզում նշանաւոր դերակատար լինինք, ունենանք նաւթահորեր, շոգենաւեր, բարձր և չքեղ շինութիւններ, հագնենք եւրոպական վերջին տարազով, — դարձեալ ասիացի ենք. և դեռ երկար ժամանակ նոյն յատկութիւններով էլ պիտի մնանք։

Տասնեակ տարիներ է, Բագուում նաւթային-արդիւնաբերութիւնն սկսուած է, և դեռ, մեր կարծիքով, 20—30 տարի էլ կըշարունակուի *)։ Սակայն, քանի հաղար մարդիկ կըլինին այստեղ, գլխիվայր հորերի մէջ ընկած և զանազան մեքենաների տակ ջարդ ու փշուր եղած,—մարդիկ, որոնց ընտանիքները դեռ այսօր էլ սպասում են...։ Իսկ որ միլիոնատէր խազէյլինը իւր նաւթահանքում, գործարանում ոչնչացած բանուորի ընտանիքի ապրուստի համար մտածեց։ Ոչ օր։ Բաւական չէ, որ չեն մտածում իրենց կերակրողների թշուառ վիճակի վրայ, այլ կան ուրիշ, աւելի սիրտաճաթող ապացոյցներ, որոնք ցոյց են տալիս, որ այդ միլիոնատէրերը ձգտում են ծծել խեղճ բանուորի վերջին ծուծը։

Բագուում քանի տարի է, որ գոյութիւն ունի հանքային ինժեներների մի կոմիտէ, որին իշխանութեան կողմից իրաւունք է տրուած բանուոր և մշակ դասակարգի դասը լսելու և անիրաւեխիղճ գործատէրերից պաշտպանելու։ Սակայն չի լինում այնպիսի օր, որ Բալախանուց կամ Սև քաղաքից մի քանի դանդաւաուրներ չգան, և այն էլ 3—5 ըուրլու պատճառով. նրանք կրակի և ծխի մէջ շարչարուել, տանջուել են, ոտը, ձեռքը, մէջքը կամ աչքը գործելու ժամանակ վնասել, մի քանի օր պարապ են մնացել, և խաղէյլիներն ամսուայ օրերից այդ մի քանի օրուայ կոպէկները, ըուբլիները մերժել են վճարել, պատճառաբանելով թէ՝ չես գործել։

Բայց տեսէք, եւրոպացին ինչպէս է անում։

Անգլիական ընկերութեան 24 նաւթահորերը և գործարանները հրդեհին զոհ գնացին այս օրերս. այդ ահագին վնասը կրելով հանդերձ անգլիացիները չմոռացան իրենց 12 այրուած բանուորներին։ Հրդեհի երրորդ օրը, ընկերութեան կառավարիչ պ. Զումախերը հեռագրում է

*) Այդ, ըստ ինքեան ապարդիւն վէճին վերջ տալու համար մենք չհրատարակեցինք յարգելի Ս. Զահ-Նազարեանցի յօդուածը։ Պ. բժիշկ Արամեանը «Նոր-Դար»-ի № 36-ում լոյս տեսած յօդուածում պահանջել էր փաստեր զեր. Սմբատ արքեպիսկոպոսից և ոչ թէ մի երկրորդից կամ երրորդից։ Դուցէ ասեն, թէ փաստը փաստ է, ով կուզէ թող հրապարակ հանէ։ Այս գործի մէջ այդպէս չէ։ Մի եպիսկոպոս, որ մի ուրիշ հանգուցեալ եպիսկոպոսին ստորացնելու համար փաստեր է հաւաքել, նա ինքը պէտք է գոնէ այդ փաստերն հրապարակ հանէ, որպէս զի պատասխանողը կարողանայ հերքումը գրելիս անցողակի ներկայացնել ընթերցող հասարակութեան առաջ հանգուցեալ եպիսկոպոսին թշնամանող արքեպիսկոպոսի պատկերը։ Մենք կարծում ենք, որ զեր. Մեսրովբ արքեպիսկոպոս սրբազանը մինչև օրս իւր ունեցած փաստերն հրապարակ չհանելով, ինքն արդէն զրկում է իւր պարքից։ Խմբ.։

*) 1870 թուականին նաւթը արտավիժում էր 50—60 և 70 սաժեն խորութիւնից, իսկ այսօր մինչև 300-ի է հասնում խորութիւնը և շատ անգամ հորը չի արտավիժում և սկսում են 25 պուդ նաւթ պարունակող խողովակով նաւթ քաշել։ Ահա այդ փարձի հիման վրայ կարելի է ասել, որ 20—30 տարուց յետոյ ձեռնատու չի լինիլ հորը փորելը։ Մանաւանդ, որ այն ժամանակ 500—600 սաժենում հազիւ նաւթ երևայ։

Լոնդոն, յայտնելով պատահած վնասը և զոհուած բանուորների թիւը։ Անգլիացիները, առժամանակ մի կողմն են թողնում նիւթական վնասը և հեռագրում են կատաղարչին, որպէս զի նա ցուցակագրի այրուած բանուորների ամեն մէկի ընտանիքի թիւը և 25 տարի ընկերութեան խնամքի տակ առնի նրանց, յատկացնելով նրանց ապրուստի համար բաւարար գումար։

Ուրախալի է, որ այսօր լուսաւոր երկրից մի ընկերութիւն կայ Բաւում, որի օրինակին կարող են հետևել մեր միլիոնատէրերը, եթէ միայն մերոնք ծաղրի առարկայ չդարձնեն ընկերութեան անդամների մարդասիրական քայլը։

Հրդեհը ամսոյս 1-ին վերջացաւ։

Ս. Մ. Գ.

ՆԱՄԱԿ ՖՐԱՆՍԻԱՅԻՑ

(«Նոր-Դար»-ի թղթակցից)

—

ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՔՆՆՈՒԹԻՒՆՆԵՐ

ՊԱՐԻԶ, 4 օգոստոսի (Ն. տ.).—Յուլիս ամսից սկսեալ Պարիզի համալսարանի և բարձրագոյն դպրոցների համար քննութեանց ժամանակ է։ Այս տարի մեր ուսանողներից մի քանիսը շրջանաւարտ եղան, կամ պատուաւոր քննութիւնների, կամ համընթացութիւնների մէջ գեղեցիկ դիրքեր գրաւեցին։

Ահաւասիկ շրջանաւարտ եղողներն՝

Պ. Աղաւնեան, բնիկ վանեցի, ուսանող բժշկութեան, իւր վերջին քննութիւններն և թէզն անցուց յաջողութեամբ և ղոկտոր-ի աստիճան ստացաւ յուլիս ամսում։ Այս երիտասարդը, իւր նախնական և երկրորդական ուսումն ստացել է Վանի ազգային վարժարանում, յետոյ Կ. Պոլիս գալով, հետևել է տաճկաց բժշկական վարժարանի դասախօսութեանց և յետոյ եկել է Պարիզ, ուր 6 տարուայ ընթացքում աւարտեց իւր բժշկական ուսումն իւր թէզն անցնելով։ Բժիշկ Արշակ Թազուրեանն մի քանի օրից ի վեր մեկներ է Կ. Պոլիս և այնտեղ Քաղկեդոնում հաստատուել է, ասում են։

Պ. Մինրդատեանց. բնիկ Կ. պոլսեցի և նախկին աշակերտ Ղալաթիայ կենդրոնական վարժարանին. Պարիզում ուսանող Հըրոլ-Սանտրալ վարժարանում, չորս տարուայ ընթացքում աւարտեց իւր շրջանն և ստացաւ *Ճարտարագործի* (Ingenieur) տիտղոսն։

Պ. Պէքեարեան, բնիկ Թէքիրտաղցի. նախկին ուսանող Կ. Պոլսոյ Սուլդանիէ վարժարանին, մի քանի տարուց յետոյ Պարիզում աշակերտել էր Էքոլ-Սանտրալի բարձրագոյն վարժարանին, որի շրջանն աւարտել էր արդէն երկու տարիներէ ի վեր. և մի տարի ինժեների պաշտօն վարել է Ֆրանսիայում և մի քանի կամուրջներ շինել. ներկայ ուսանողական տարուայ սկզբում, նա կարողացաւ, միակ օտարականն և միակ հայն լինելով, ընդունուել Ֆրանսիայի ամենաբարձր վարժարաններին միոյն մէջ՝ *նաւային ճարտարապետական վարժարանն* (Génie masitime). այդտեղ առաջին տարուայ խիստ դժուարին քննութիւններն յաջողութեամբ անցնելուց յետոյ, նա այժմ ուղարկուել է Թուլոն՝ Ֆրանսայի ծովեզերեայ զինուորական քաղաքը, այնտեղ զինուորական և հասարակ նաւերի շինութիւններն ի մօտոյ ուսումնասիրելու։ Նա այնտեղ մնալու է մի քանի ամիսներ, դպրոցի ծրագրին համեմատ։

Պ. Արամ Թախթաճեան, բնիկ Կ. պոլսեցի, նախկին ուսանող Ղալաթիայի կենդրոնական վարժարանին, ճարտարապետական ուսանող Պարիզում։ Յուլիս ամսուայ ընթացքում գեղարուեստից վարժարանի համընթացքում կարողացաւ ամբողջ մրցող աշակերտի (թուով հարիւրաւորներ, որոնց զբաղեցնում ֆանտազիներ) առաջին հնգից մին լինել։ Այդ պարոնը, որ յաջողակ է իւր մասնագիտութեան մէջ, արդէն անցեալում մի *մեդալ* ստացել էր վարժարանից։

Գեղարուեստի մասին խօսելիս, չենք կարող նաև չյիշել այն հայ երիտասարդ արտիստներին, որոնք այս տարուայ սալոնում՝ ընդունուեցան և ցուցահանդէս դրեցին իրենց աշխատանքները։ Չորս հայ նկարիչներ ընդունելի եղան սալոնում, որոնց ամենն ևս անցեալ և միւս տարիներում ընդունուել էին։ Դրանք են.

Պ. *Սարգիս Տիրանեան*, որ մի մարդու նկարն էր դուրս գրել, խիստ յաջողութեամբ նկարուած. այդ նկարից տեսնում է, որ այդ տաղանդաւոր նկարիչն առաջնակարգ *պարտրէտիստներից* մին պիտի լինի։

Պ. *Շապանեան*. այս նկարիչը նոր չէ. տեսաւորի, մենք, որքան որ յիշում ենք, չորս-հինգ տարիներ է նա անընդհատ ամեն տարի ցուցահանդիսին մասնակցում է։ Այս նկարչին մասնաճիւղն է ծովանկարը, ինչն աշակերտել է, ինչպէս ասում են, Այվազովսկուն. յետոյ Պարիզ եկել, կատարելագործել է արհեստն։ Այս տարի ցուցահանդէս դրել է *«Ովկիանոսին եզերքին վրայ»* անուն մի նկար։

Պ. *Է. Շահինեան*. երկու տարուց ի վեր սալոն ընդունուում է. սա իւր նրկարչական ուսումն Իտալիայում առել և Պարիզում կատարելագործել է։ Այս տարի ցուցահանդէս դրել էր երկու նկարներ, երկուքն ևս լաւ յաջողած։ Նկարներից միոյն անուն էր *«Ապաստանարան»* (Refuge) իսկ միւսն ներկայացնում էր *«Ներքին կեանք»* (Interieur)։

Պ. *Դրիզորեան*. այս պարոնն եգիպտացի հայ է. իւր նկարչական ուսումն առել է Պարիզում և իւր աշխատանքով բաւական նախանձելի մի տեղ գրաւել է ոչ միայն հայերի մէջ, այլ և Ֆրանսայի արտիստների շարքում։ Այս տարի պ. Դրիզորեան ցուցահանդէս դրել էր մի պ. X-ի նկարը, խիստ գեղեցիկ և բնական. սա ևս մեր *պարտրէտիստների* առաջին շարքում տեղ ունի։

Պ. *Զաքարիա Զաքարեան*. այս պարոնն որանից տասնեակ տարիներ առաջ Պարիզ եկել էր բժշկութիւն սովորելու, երբ յանկարծ իւր մէջ նկատում է նրկարչական տաղանդ։ Նա սկսում է նրկարչութեամբ զբաղուել և քիչ ժամանակից յետոյ նկարում է խիստ շնորհքով նկարներ։ Պ. Զաքարեանի մասնագիտութիւնն է *մեռեալ բնութիւն* նրկարել և այդ ճիւղին մէջ նախանձելի դիրք ունի ամբողջ Պարիզի գեղարուեստական աշխարհում։ Նրա մի նկարը գրնել է Պարիզի քաղաքապետութիւնը և դրել Պարիզի *Լուքսեմբուրգի* միւզէում։ Պ. Զաքարեան ֆրանսիական կառավարութիւնից ստացել է նաև մի շքանշան և է *ասպետ պատուոյ լեգիոնի* (Chevalier de la legion d'honneur)։ Այս տարի, ինչպէս միշտ, պ. Զաքարեան ցուցահանդէս դրել էր *մեռեալ բնութեանց* նկարներ։

Ահա այս տարուայ մեր երիտասարդների յաջողութիւններն. մենք նրանց կատարեալ յաջողութիւն ենք մաղթում կեանքի դժուարութեան մէջ ևս, մանաւանդ, նրանց մաղթումենք *զործունէութիւն*, ճշմարիտ, օգտակար գործունէութիւն... ապա թէ ոչ, մենք իրենց առած ուսման, մենք իրենց վատնած դրամին, մենք բաշած կարօտներին, մենք նրանց կերած հացին...

Ռ. Շահ-Մելիքեան.

ՔԱՂԱՔԱԿԱՆ

ՉԻՆԱՍՏԱՆ ԵՒ ՊԵՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ.—Վիեննայի կիսապաշտօնական «Politische Correspondenz»-ի մէջ մի նամակ է տպագրուած Պետերբուրգից, որը գրաւել է արևմտեան մամուլի ուշադրութիւնը։ Թղթակիցն, ի միջի այլոց, ասում է.

«Այն լուրը, թէ վերջին ժամանակս Ռուսիայի և Անգլիայի յարաբերութիւնները խիստ լարուել են, պէտք է չափազանցրած համարել։ Չի կարելի, ի հարկէ, ուրանալ, որ երկու պետութիւնների միջև յարաբերութիւնները փոքր ինչ սուր բնաւորութիւն են ստացել այն միջոցների շնորհիւ, որ Անգլիայի ցոյց տուած յատկութիւնների պատճառով ձեռք է առել Ռուսիայի Պեկինի ներկայացուցիչ պ. Պաւլովը. բայց և այնպէս հիմք չկայ ասելու, թէ քաղաքական դրութիւնը վտանգաւոր ընթացք է ստացել։ Ընդհակառակը, գիտակ շրջաններում համոզուած են, որ այդ միջադէպն ևս կաջողուի լուծել դիւանագիտական միջոցներով և թէ երկու պետութիւններն ևս հնարաւորութիւն կունենան, առանց ընդհարման գիմելու, այսուհետև ևս պահպանել իրենց շահերն Արևելեան Ասիայում։ Երկու կողմի էլ տրամադրութիւնն այնպէս է, որ չպէտք է երկիւղ կրել, թէ նրանք ուղղակի ընդհարում կունենան, թէև ապագայումն ևս դժուար թէ աջողուի խուսափել մի քանի տարաձայնութիւններից»։

Միևնոյն լրագրին ամենավճռական կերպով հերքում է անգլիական լրագրների հաղորդած այն լուրը, որ Ռուսիայի վերին սալոն ընդունուեցաւ Լոնդոնի և Պետերբուրգի կառավարութեանց միջև յարաբերութիւնները լարուած լինելուն հետ։

Միևնոյն անգլո-ռուսական յարաբերութիւնների մասին լրագրներն հաղորդում են, թէ անգլիական արմատականները դժգոհ են արտաքին գործերի ենթ-քարտուղար Կեօրզոնի այս օրերս արած յայտարարութիւններից և որոշել են պատգամաւորների ժողովում նորից հարցաքննդում անել արտաքին քաղաքականութեան մասին. ընդամենն նրանք չեն կամենում բարդել դրութիւնը, այլ միայն ցանկանում են այնպէս անել, որ Ռուսիան, Նիու-Չուանգի վերաբերութեամբ իրեն արուած գործողութեանց կատարեալ ազատութեան փոխարէն, պաշտօնապէս խոստում տայ, որ ինքը չի խառնուիլ բրիտանական գործերին Եան-Ցզէ-Քեանգի հովտում։

Լոնդոնում Պարիզից տեղեկութիւն է ստացուած, թէ, ի նկատի ունենալով, որ Չինաստանում կարող են բարդութիւններ կատարուել, Ռուսիան և Ֆրանսիան բանակցում են իրար հետ նոր համաձայնութիւն կայացնել միասին գործելու միւս պետութեանց դէմ ի դէպս, եթէ ընդհարումներ պատահեն Եւրոպայից դուրս։

—

ՍՊԱՆԻԱ.—Կարլիստների գործունէութիւնը մեծ երկիւղ է ազդում։ Կառավարութիւնը մեծ ուշադրութեամբ է վերաբերում կարլիստների բանակից լքեսեսների բերած լուրերին և ամեն ըսպէ սպասում է, որ զանազան տեղերում ապստամբութիւն ծագի։ Վալենցիայի հետ արդէն կտրուած է հեռագրական հաղորդակցութիւնը։ Կարլիստների հետ միաժամանակ իրենց գլուխը բարձրացրել են նաև անիշխանականները։

Մադրիդում մի դաւադրութիւն է գլուխ հանած Սագաստայի դէմ։

— «La Estafeta» լրագրի հաղորդելով, Կուբա կղզու ապստամբութիւնը ճնշելու համար Ցզանիան ծախսել է 1,874 միլիոն պեսետ (պեսետն հաւասար է ֆրանկին)։ Համազգային ռազմագրութեամբ հաւաքուած գրամագլուխը նոյնպէս (23 միլիոն) արդէն ծախսուած է։ Այս բոլորը ոչինչ է՝ համեմատած մարդկանց կորուստների հետ։ Մինչև 1898 թուի մարտ ամիսը Կուբա էր ուղարկուած մօտ 200,000 զինուոր։ Դիւնների մէջ ընկած զոհերի թիւն իսկապէս չնչին էր. սպանուել էին 1 զօրավար, 60 սպայ և 1,314 զինուոր. վերքերից մեռել էին 1 զօրավար, 81 սպայ և 704 զինուոր. բայց ճահճային տենդից և վարակիչ ուրիշ հիւանդութիւններից մեռել են 440 սպայ և 53,000 զինուոր։ Այսպիսով 1,000 հոգու վրայ գալիս է 10 հոգի պատերազմի դաշտում սպանուած կամ վերքերից մեռած, 66 հոգի դեղին տենդից մեռած և 21 հոգի ուրիշ հիւանդութիւններից մահացած։ Կուբայում Սպանիան տանուաղն կորցրել է 100,000 մարդ։ Այսպիսի մի թշուառութիւն, ասում է «Estafeta»-ն, դեռ ոչ մի ազգ չի կրել։

—

ՍԻԱՄ.—Բրիւսէլից «Daily News»-ին հեռագրում են, որ Ռուսիան ձգտում է ածխի կայան ձեռք բերել Խաղաղական ովկիանոսում, դլխաւորապէս Մալայեան թերակղզում, Փենանգից դէպի հիւսիս։ Ի նկատի ունենալով Ռուսիայի և Սիամի միջև եղած բարեկամութիւնը (Սիամի թագաժառանգն ուսանում է Պետերբուրգում), կարելի է կարծել, որ այդ ծրագիրը կաջողուի, եթէ միայն, աւելացնում է թղթակիցը, Բանգկոգի բրիտանական ներկայացուցիչն աչալուրջ չլինի։

—

ՖՐԱՆՍԻԱ. — Յայտնի զրող Օկտաւ Միրբոն իւր սեպհական գումարներից վճարել է այն 3,000 ֆրանկ տուգանքը, որին դատապարտել էր Զոլային Վերպրինցեսի Կոդենհագէն մեկնելն իբրեթէ սերտ կապ ունի Լոնդոնի և Պետերբուրգի կառավարութեանց միջև յարաբերութիւնները լարուած լինելուն հետ։

Միևնոյն անգլո-ռուսական յարաբերութիւնների մասին լրագրներն հաղորդում են, թէ անգլիական արմատականները դժգոհ են արտաքին գործերի ենթ-քարտուղար Կեօրզոնի այս օրերս արած յայտարարութիւններից և որոշել են պատգամաւորների ժողովում նորից հարցաքննդում անել արտաքին քաղաքականութեան մասին. ընդամենն նրանք չեն կամենում բարդել դրութիւնը, այլ միայն ցանկանում են այնպէս անել, որ Ռուսիան, Նիու-Չուանգի վերաբերութեամբ իրեն արուած գործողութեանց կատարեալ ազատութեան փոխարէն, պաշտօնապէս խոստում տայ, որ ինքը չի խառնուիլ բրիտանական գործերին Եան-Ցզէ-Քեանգի հովտում։

Լոնդոնում Պարիզից տեղեկութիւն է ստացուած, թէ, ի նկատի ունենալով, որ Չինաստանում կարող են բարդութիւններ կատարուել, Ռուսիան և Ֆրանսիան բանակցում են իրար հետ նոր համաձայնութիւն կայացնել միասին գործելու միւս պետութեանց դէմ ի դէպս, եթէ ընդհարումներ պատահեն Եւրոպայից դուրս։

—

ՍՊԱՆԻԱ.—Կարլիստների գործունէութիւնը մեծ երկիւղ է ազդում։ Կառավարութիւնը մեծ ուշադրութեամբ է վերաբերում կարլիստների բանակից լքեսեսների բերած լուրերին և ամեն ըսպէ սպասում է, որ զանազան տեղերում ապստամբութիւն ծագի։ Վալենցիայի հետ արդէն կտրուած է հեռագրական հաղորդակցութիւնը։ Կարլիստների հետ միաժամանակ իրենց գլուխը բարձրացրել են նաև անիշխանականները։

Մադրիդում մի դաւադրութիւն է գլուխ հանած Սագաստայի դէմ։

— «La Estafeta» լրագրի հաղորդելով, Կուբա կղզու ապստամբութիւնը ճնշելու համար Ցզանիան ծախսել է 1,874 միլիոն պեսետ (պեսետն հաւասար է ֆրանկին)։ Համազգային ռազմագրութեամբ հաւաքուած գրամագլուխը նոյնպէս (23 միլիոն) արդէն ծախսուած է։ Այս բոլորը ոչինչ է՝ համեմատած մարդկանց կորուստների հետ։ Մինչև 1898 թուի մարտ ամիսը Կուբա էր ուղարկուած մօտ 200,000 զինուոր։ Դիւնների մէջ ընկած զոհերի թիւն իսկապէս չնչին էր. սպանուել էին 1 զօրավար, 60 սպայ և 1,314 զինուոր. վերքերից մեռել էին 1 զօրավար, 81 սպայ և 704 զինուոր. բայց ճահճային տենդից և վարակիչ ուրիշ հիւանդութիւններից մեռել են 440 սպայ և 53,000 զինուոր։ Այսպիսով 1,000 հոգու վրայ գալիս է 10 հոգի պատերազմի դաշտում սպանուած կամ վերքերից մեռած, 66 հոգի դեղին տենդից մեռած և 21 հոգի ուրիշ հիւանդութիւններից մահացած։ Կուբայում Սպանիան տանուաղն կորցրել է 100,000 մարդ։ Այսպիսի մի թշուառութիւն, ասում է «Estafeta»-ն, դեռ ոչ մի ազգ չի կրել։

—

ՍԻԱՄ.—Բրիւսէլից «Daily News»-ին հեռագրում են, որ Ռուսիան ձգտում է ածխի կայան ձեռք բերել Խաղաղական ովկիանոսում, դլխաւորապէս Մալայեան թերակղզում, Փենանգից դէպի հիւսիս։ Ի նկատի ունենալով Ռուսիայի և Սիամի միջև եղած բարեկամութիւնը (Սիամի թագաժառանգն ուսանում է Պետերբուրգում), կարելի է կարծել, որ այդ ծրագիրը կաջողուի, եթէ միայն, աւելացնում է թղթակիցը, Բանգկոգի բրիտանական ներկայացուցիչն աչալուրջ չլինի։

—

ՖՐԱՆՍԻԱ. — Յայտնի զրող Օկտաւ Միրբոն իւր սեպհական գումարներից վճարել է այն 3,000 ֆրանկ տուգանքը, որին դատապարտել էր Զոլային Վերսայլի դատարանը։ Միւս կողմից, մի ուրիշ անձնաւորութիւն, որը կամեցել է անյայտ մնալ, վճարել է դատական այն ծախքերը, որ պէտք է վճարէր Զոլան վճռաբեկ ատեանին իւր տուած բողոքի համար և որը անում է 450 ֆրանկ։ Այդ բանն արուած էր նրա համար, որպէս զի վեր չգրեն Զոլայի կայքերը։

—

ԹԻԵՐԳԻԱ. — Կ. Պոլսի զեկավարող շրջաններում ուշադրութիւն են դարձրել այն հանգամանքի վրայ, որ սերբերի և բուլղարների միջև եղած ընդհարումների մէջ միշտ նշանաւոր դեր են կատարում այդ երկու ազգութեանց ուսուցիչները։ Ուսի մեծ վեզիրը, «Polit. Corresp.»-ի ասելով, կարգադրել է Մակեդոնիայի վալուն, որ այսուհետև գործէ մեծ խստութեամբ և պաշտօնից հեռացնէ ուսուցիչ-ագիտատորներին, իսկ հարկաւոր դէպքում նոյն իսկ արտաքսի։ Այդ կարգադրութեան հիման վրայ, արդէն ասիական Թիւրքիա են աքսորուած Ուսքիւբի և Սալոնիկի բուլղարական դպրոցների վեց ուսուցիչ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

Փոկուս.— Պետերբուրգում ֆոկուսնիկներից մէկի ներկայացման ժամանակ՝ մի կուբիսոզ պատահեց։ Թատրոնի դահլիճի յետին շարքերից միևնոյն նստած էր մի ինչոր պարոն։ Ցանկարծ նա զգում է, որ իւր գրպանն է սողում մի անյայտ մարդու ձեռքը։ Հաստատ համոզուած լինելով, թէ իւր գրպանից հանելու բան չկայ, պարոնը մի քանի բոպէ բոլորովին հանգիստ է նստում, իսկ յետոյ մեքենայաբար ձեռը գրպանը տանելով՝ գտնում է այնտեղ արծաթէ մանէթանոց։ Ուրախացած այս անսպասելի գիւտի վրայ, նա վեր է կենում, գնում է բուֆէտ և մի քանի բաժակ արաղ է կոնծում հետն էլ բուտերբրոտ անուշ անում. ապա վճարելով փողը՝ 25 կոպէկ մնացորդը յետ է ստանում։ Դրանից յետոյ վերադառնում և հանգիստ իւր տեղն է նստում։ Սկսում է ներկայացումը։ Ֆոկուսնիկը ցոյց է տալիս մի քանի բաւական անհամ ֆոկուսներ և յետոյ վերցնում է ձեռը մի արծաթէ բուբլիանոց, մի քանի օյիններ անելուց յետոյ՝ զցում է այն դէպի հանդիսականները։ Բուբլին անյայտանում է. «Եւ այսպէս, պարոնայք, բուբլին անյայտացաւ և յանկարծ բուսաւ ձեզանից մէկի գրպանում։ Բուբլին այս դէպքում գտնւում է վերջին շարքում նստող պարոնի գրպանում»։ Այն ժամանակ վերջինս վեր է կենում նստած տեղից և դառնալով ֆոկուսնիկին ասում է. «Դուք սխալուեցիք, պ. ֆոկուսնիկ, բուբլին իմ մօտը չէ. էն աւելի հեռու տեղ է զնացել՝ բուֆէտը, իսկ ինձ մօտ մնացել է միայն 25 կոպէկ»։

ՀԵՌԱԳՐՆԵՐ

ՄԱԴՐԻԴ, 5 օգոստոսի.— Մարշալ Բլանկն յայտարարեց, որ հրաժարական է տալիս, ասելով, թէ չի կարող զեկավարել Կուբայից սպանական զօրքերի հեռացման գործը։

ՀՈՆԳԿՈՆԳ. — Աւգուստին բարեկամներից մէկին յայտնել է, թէ օգոստոսի 4-ին Դեվն պահանջել էր, որ Մանիլան մի ժամից յետոյ անձնատուր լինի։ Սպանիացիներն մերժել էին։ Աւգուստին անցաւ սպասող գերմանական նաւակը, որը տարաւ նրան «Կայիզերին Աւգուստա» նաւը։ Վերջինս հեռացաւ մինչև ռմբակոծման վերջանալը։

ՀՈՆԳԿՈՆԳ.—Օգոստոսի 5-ին Աւգուստին պաշտօնանկ է եղած։ Զօրքերի զբաղուսը հրամանատարութիւնն յանձնուած է Խաուդենէսին։ Այստեղ հասաւ «Մոնտերէյ» մոնիտորը։ Ամերիկացիներն յայտնեցին, որ Մանիլայի ռմբակոծութիւնը կըսկսուի օգոստոսի 9-ին, կէսօրին։ Օգոստոսի 13-ին Մանիլան անձնատուր եղաւ ամերիկացիներին, որոնք բարձրացրին իրենց դրօշակը։ Սպանական սպաներն ազատ են թողուած։ Սպանական ապստամբները կանգնած են քաղաքից դուրս։

ՆԻԺՆԻ-ՆՈՎԳՈՐՈԴ. —Գիշերը այրուեց, մոխիր դարձաւ Ռուկավիշնիկովի աշխա-

տասիրութեան տունը բանուորի անզգուշութիւնից։ Տկար և խնամուող ծերունիները զոհ դարձան կրակին։ Մինչև երեկոյ հանուած է 13 դիակ։ Պնդում են, որ զոհերի թիւը շատ է։

Խմբագիր-հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՏԵՂԵԿԱՏՈՒ

ԿԱՆԱՆՑ ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

ԾՆՆԴԱԲԵՐԱԿԱՆ ԲԱԺԱՆՄՈՒՆՔՈՎ

(Սոլլոսկ, Սադովայա փողոց, № 64)

(սեպհական տուն)

Հեռախօս № 230

Երթևեկ հիւանդների ընհանուր ընդունելութիւնն երկուշաբթի, չորեքշաբթի և ուրբաթ օրերը՝ ժամը 2—4 ցե երեկը. վճարը հիւանդների կարողութեան համեմատ, մասնաւոր ընդունելութիւն՝ ամենայն օր՝ ժամը 8—10 առաւօտեան—վճարը 2 ր.։ Գիշերօթիկ հիւանդները և ծննդաբեր կանայք ընդունւում են գիշերուայ և օրուայ ամեն ժամանակ, բայց այդ մասին առաջուց տեղեկութիւն պիտի տրուի. վճարը որոշւում է ըստ դասակարգերի։ Զուտեղները՝ ձրի են։ Գինեկոլոգիայի բաժանմունք ընդունողները վճարում են 1 ր. 50 կ. մինչև 8 ր. մի օրուգիշերուա համար. ծննդաբերական բաժանմունքը մանողները—1 ր. մինչև 5 ր. մի օրուգիշերուայ համար։ Երկունքի ազատելը 10 ր. մինչև 50 ր.։ Անդամահատութիւնը ըստ համաձայնութեան։ Երթևեկ բոլոր հիւանդները դեղը և նիւթեր ստանում են ընդունելութեան ժամանակ ձրի։ Զուտեղների համար 1-ական մահճակալ է դրուած իւրաքանչիւր բաժանմունքում, ուր տեղաւորւում են նրանք տեսչի և նրա պ. պ. ընկերների առաջարկութեամբ ձրի։

Հիւանդանոցի տէր դ տեսուչ
Մ. ՄԿՐՏՉԵԱՆ.

—

ՌԱԶՄԱՎԻՐԱԿԱՆ ՃԱՆԱՊԱՐՀ

1898 թ. մայիսի 1-ից մինչև 1898 թ. նոյեմ. 1

Թիֆլիսից I-ին հինգ տեղ ունեցող կառքը մեկնում է առ. 9 ժ. 30 ր. գիշերում է Մլեթում և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 7 ժ. 20 ր.։ II-ը մեկնում է առաւօտեան 11 ժամին և գիշերում է Պասանաուրում. հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 9 ժ. 20 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառքը (առանց գիշերելու) մեկնում է օրուայ 2 ժ. 30 ր. և հասնում է Վլադիկաւկազ միւս օրը եր. 4 ժ. 35 ր. II-ը մեկնում է եր. 9 ժ., առանց գիշերելու, հասնում է Վլադիկաւկազ միւս օր եր 11 ժ. 20 ր.։

Վլադիկաւկազից հինգ տեղ ունեցող I կառքը մեկնում է առ. 7 ժ. գիշերում է Մլեթում և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 6 ժ. 30 ր.։ II-ը մեկնում է առ. 9. 30 ր. գիշերում է Դուդաուրում և հասնում է Թիֆլիս միւս օրը 7 ժ. 55 ր.։

Վեց տեղ ունեցող I-ին հանրակառքը (առանց գիշերելու) մեկնում է եր. 5 ժ. 30 ր. և հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 7 ժ. 25 ր.։ II-ը մեկնում է եր. 9 ժ. և առանց գիշերելու հասնում է Թիֆլիս միւս օրը եր. 10 ժ. 55 ր.։

—

ԱՆԴՐԿՈՎԿԱՍԵԱՆ ԵՐԿԱԹՈՒՂԻ

Մարդատար գնացքը № 1 *Բազուից Թիֆլիս* մեկնում է օրուայ 4 ժ. 50 ր. հասնում է *Թիֆլիս* առ. 8 ժ. 26 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* առ. 9 ժ. 10 ր., հասնում է *Բաթում* եր. 8 ժ. 47 ր.

Փոստային գնացքը № 3 *Բազուից Թիֆլիս* մեկնում է գիշ. 12 ժ. 20 ր., հասնում է *Թիֆլիս* եր. 6 ժ. 33 ր., մեկնում է *Թիֆլիսից Բաթում* եր. 7 ժ. 48 ր., հասնում է *Բաթում* առ. 8 ժ. 33 ր.։

Մարդատար գնացքը № 2 մեկնում է *Բաթումից Թիֆլիս* առ. 8. ժ. 20 ր., հասնում է *Թիֆլիս* եր. 8 ժ. 22 ր., մեկնում է *Թիֆլիսից Բազու* եր. 9 ժ. 05 ր., հասնում է *Բազու* օրուայ 3 ժամին։

Փոստային գնացքը № 4 մեկնում է *Բաթումից Թիֆլիս* եր. 8 ժ. 35 ր., հասնում է *Թիֆլիս* առ. 9 ժ. 07 ր., մեկնում է *Թիֆլիսից Բազու* առ. 10 ժ. 57 ր., հասնում է *Բազու* առ. 5 ժ. 45 ր. ցոպէին։

—

ԱՄԱՐԱՆՈՑԱՅԻՆ ՄԱՐԴԱՏԱՐ ԳՆԱՑՔՆԵՐ

Թիֆլիսից Բորժոմ մեկնում է № 7 գնացքը օրուայ 2 ժ. 30 ր. և հասնում է *Բորժոմ* երեկոյեան 7 ժ. 50 ցոպ.։

Բորժոմից Թիֆլիս մեկնում է № 8 գնացքը գիշերուայ 1 ժ. 44 ր. և հասնում է *Թիֆլիս* առաւօտեան 7 ժ. 33 ր.։

—

Լրացուցիչ ամարանոցային № 7—bis գնացքը *Թիֆլիսից Բորժոմ* է մեկնում օրուայ 3 ժ. 30 ր. և հասնում է *Բորժոմ* երեկոյեան 9 ժ. 20 ցոպ.։

Լրացուցիչ ամարանոցային № 8 · bi գնացքը *Բորժոմից Թիֆլիս* է մեկնում գիշերուայ 2 ժ. 50 ր. և հասնում է *Թիֆլիս* առաւ. 8 ժ.

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

ԼՈՅՍ ՏԵՍԱԻ

ՄԵԼԻՔ-ՇԱՀԻ ՀԵՔԻԱԹԸ

հանդերձ երգերով

(փոխադրութիւն տաճկերէնից)

Աշխատասիրեց *Աշրդ-Ջիւանին.*

Գինն է 25 կոպ.

Վաճառւում է Թիֆլիսի յայտնի գրավաճառանոցներում, Մ. Վարդանեանցի տպարանում և աշխատասիրողի մօտ։ Գումարով գնողներին զիջում։

3—1

ԿՈՄԻՍԻՕՆԵՐԱԿԱՆ ԳՐԱՍԵՆԵԱԿ

ՄԵՇԵՂԵՍԵՐ քաղաքում։

Պարսկաստանի

Ստացւում են ապրանքներ Ռուսիայից, Պարսկաստանից և ուղարկւում են ցանկացած տեղերը։ Ցանկացողները կարող են ապրանքներ ուղարկել։

Ներսէս Տէր-Յովհաննիսեան

(1079) 3—1

Լոյս տեսաւ

ՀՐԱՏ. ԸՆԿ. ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԵԱՄԲ

ՀԵՆՐԻԿ ՍԵՆԿԵՎԻՉԻ

ՅՈ ԵՐԹԱՍ

(QUO VADIS)

Վէպը, Ներոնի ժամանակից։ Լեհերէնից թարգմ.

ՍՏ. ԼԻՍԻՑԵԱՆԻ։

(742 մեծագիր երես)

ԳԻՆԸ 1 ՐՈՒԲԼԻ 50 ԿՈՊ.

Դիմել՝ ТИФЛИСЪ, Армянское Издательское Общество.

(2001) 50—43

ԹԻՖԼԻՍԻ ՀԱՅՈՑ ՀՐԱՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ

Լոյս տեսաւ

ՄԱՐԴԵՄ

(HOMO SUM)

ՎԷՊ

Գերմաներէն բնագրից թարգմանեց

ՍՏ. ՄԱԼԽԱՍԵԱՆՑ

428 երես, ԳԻՆՆ Է 1 ՐՈՒԲԼԻ

Դիմել՝ Армянское Издательское Общество въ Тифлисѣ.

(1067) 6—6

Առանձին գլխոյկով լոյս տեսաւ

„ԿԼԱՒԴԻԱՅԻ ԱՅԳՈՒՄ“

ԼՐՆՍՏ ՓՈՆ-ՓԻԼԴԵՆԲՐՈՒՆԻ։

թարգմանեց

ՏԱՃԱՏ ՔԱՀ. ՄԱՐԱՂԵԱՆ.

Գինն է 20 կոպէկ։

Վաճառւում է կենդր. գրավաճ. և թարգմանչի մօտ՝ Զամախի։ 10—4

Լոյս տեսաւ

ԼԵՒՈՆ ԽԱՆ-ԱՂԵԱՆԻ

ԳԻՒՂԱՏՆՏԵՍԱԿԱՆ ԳՈՐԾԻՔՆԵՐ ԵՒ ՄԵՔԵՆԱՆԵՐ

բացատրական բառարանով և 250 նկարով։

Հրատարակիչ Թիֆլիսի հայոց հրատարակչական ընկերութեան.

ԳԻՆԸ 50 ԿՈՊԷԿ։

Դիմել՝ Тифлисъ, Общество изданія армянскихъ книгъ.

(1004) 50—34

ОТКРЫТА ПОДПИСКА

НА ЗАКАНЧИВАЮЩЕЕСЯ ПЕЧАТАНІЕМЪ

2-ое вновь обработанное и дополненное изданіе

ЛИТЕРАТУРНО НАУЧНАГО СБОРНИКА:

„Братская помощь пострад. въ Турціи армянамъ“

Въ настоящее удешевленное изданіе, содержащее болѣе 140 статей разнообразнаго содержанія въ прозѣ и въ стихахъ, вошло болѣе 40 новыхъ, знакомящихъ съ одной стороны съ ужасающими бѣдствіями турецкихъ армянъ, а съ другой—съ бытовыми и культурными условіями жизни армянъ въ прошломъ и въ настоящемъ.

Къ книгѣ приложены двѣ отдѣльныя большія группы (болѣе 100 человѣкъ) армянъ переселенцевъ, снятыя съ натуры, а также болѣе 150 рисунковъ (40 новыхъ), въ томъ числѣ многіе въ цвѣтныхъ краскахъ и два: „Рѣзня армянъ въ Требизондѣ 1895 г.“ И. К. Айвазовскаго и „Весенняя буря“ Магдесіана, въ три тона.

Цѣна 3 р. на обыкновенной бумагѣ и 5 р. на веленевой.

Стоимость пересылки наложеннымъ платежомъ. Число веленевыхъ экземпляровъ ограничено, и подписчики будутъ удовлетворены по времени поступленія подписки.

Высылающимъ задатокъ 1 руб. книга будетъ выслана съ переводомъ стоимости наложеннымъ платежомъ.

Подписка принимается: въ *Москвѣ*: въ конторѣ *Русскихъ Вѣдомостей*, въ книжныхъ магазинахъ Карбасникова (на Моховой) „Трудъ“ (на Тверской), *Новаго Времени* (Неглинный проѣздъ) и Вольфа (Кузнецкій мостъ); въ Тифлисѣ: въ центральной книжной торговлѣ на Головинскомъ проспектѣ.

NB. Лица, не окончившія счетовъ по 1-му изданію „Братской помощи“, благоволятъ поспѣшить окончаніемъ таковыхъ.

Покорнѣйшая просьба къ изданіямъ, сочувствующимъ цѣли настоящаго сборника, перепечатать объявленіе.

5—5 Завѣд. ред *Гр. Джаншіевъ*

ԿՈՒԶՄԻՉԻ ԴԵՂԱՅԻՆ ԽՈՏԵՐԻ ԳԼԽԱՒՈՐ ՊԱՀԵՍՏ

„ԷՖԷԴՐԱ“

Փողով և վերադիր վճարով պոստով ուղարկւում է Ռուսիայի բոլոր տեղերը կենսաբար յատկութիւն ունեցող մայիսեան ծաղկած **ԷՖԷԴՐԱՅԻ** *ամենաարժէքաւոր տեսակը։ Առաջին տեսակի ֆունտն արժէ 3 ր., երկրորդ տեսակինը 2 ր., միւս վաճառողների ծախածից 2 ր. էժան։ Ուղարկւում է և տպագրուած այն խորհուրդը, թէ ինչպէս պէտք է գործադրել այս դեղը, որ վերականգնում է կանոնաւոր մարսողութիւնը և բուժում է ամեն տեսակ ռեմատիզմներից, ստամոքսի և աղիքների կատարրից, հնչաւորութիւնից, հապից, փորկապութիւնից, դեղձուներիայից, սակաւարիւնութեան պատճառներից և այլն։*

ԷՖԷԴՐԱՅԻ *բարերար ազդեցութեան մասին վկայում է Կայսերական գիտաւորական-բժշկական ճեմարանը, ուստի և թոյլ է տրուած վաճառելու, (տես «Ծվեռ» լրագիրը, 1894 թ. № 74)։ Պուպերով վաճառւում է՝ ըստ համաձայնութեան։ Պարտանակու բրոշիւրը էֆեդրայի մասին 30 կ. է. 2 ֆունտ գնողին ուղարկւում է ձրի։ Ուներ շնորհակալական բազմաթիւ նամակներ։*

Հասցէն՝ Г. Бузулукъ, Самар. губ. складъ Эфедры М. Г. Артищевой.

(1077) 3—1

ԺԸՆԵՒԻ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐԻ ԳՈՐԾԱՐԱՆԱՅԻՆ

ՊԱՀԵՍՏ

ՕԴԵՍՍԱՅԻ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ



Коблевская улица, домъ № 38, кв. № 11.

Ամերիկական ոսկու ժամացոյցների մեծ պահանջը ստիպեց մեզ անմիջական յարաբերութիւնների մէջ մտնել հանրահռչակ ամերիկական գործարանի հետ, որը անուն է հանել իր ժամացոյցների չքեղութեամբ և զլմացկունութեամբ. այդպիսով մենք հնարաւորութիւն ունենք այդ ժամացոյցները, որոնք վոխարինում են և դժուարութեամբ են զանազանւում իսկական ոսկեայ ժամացոյցներից, փոխանակ 20 բուբլու վաճառելու

ՄԻՄԻԱՅՆ 11 ՐՈՒԲԼՈՎ

ՃՂԹԱՅՈՎ և ԲՐԵԼՈԿՈՎ

և, ըստ ցանկութեան ապսպրողի, իւր ազգանուն սկզբնատառերով ժամացոյցի վերին խուփի վրայ։

ՆՈՅՆՊԻՍԻ ԿԱՆԱՆՑ ԺԱՄԱՑՈՑՑՆԵՐԸ 1 Ր. ԹԱՆԿ։

Մեր պահեստից դուրս թողնուած իւրաքանչիւր ժամացոյցի վրայ կայ կառավարութիւնից հաստատուած մեր պլոմբը, և 6 տարի ժամանակով գրաւոր երաշխաւորութիւն ենք տալիս ժամացոյցների ճիշտ բանելուն համար։ Մեր ֆիրմայի երկրամեայ գոյութիւնը կատարելապէս երաշխաւորում է, որ պ. պ. ապսպրողները համարձակ կարող են ֆիրմային վերաբերուել կատարեալ վստահութեամբ։ Ժամացոյցն ուղարկւում է վերադիր վճարով մի բուբլի կանխավճար ստանալուց յետոյ։ Ծրարը ժամացոյցների գործարանային պահեստի Օդեսսայի բաժանմունքից ապսպրողների

ՃԱՆԱՊԱՐՀԱԾԱԼՔ ՁԵՆ ՎՃԱՐՈՒՄ։

Հասցէն՝ Одесское Отдѣленіе Женевскаго Фабричнаго Склада часовъ, г. Одесса, Кобелевская улица, домъ № 38. Почтамтъ ящ. № 765.

М) 7629З 12—9

ԱՌԵՒՏՐԱԿԱՆ ԿՈՒՐՍԵՐ

ԹԻՖԼԻՍ, ՆԱԳՈՐՆԱՅԱ ՓՈՂՈՑ, № 9

Ցանկացողը ունենալ իրենց առևտրական գործերի համար անցեալ յունիս ամսում ուսման ընթացքն աւարտած աշակերտներ և աշակերտուհիներ, թող բարեհաճեն դիմել կուրսերի հիմնողին, Ս. Մանուէլեանցին։ Աւարտողները ստացել են մասնագիտական առևտրական կրթութիւն Կովկասի ուսումնարանական շրջանի հոգաբարձուից հաստատուած ծրագրի համեմատ, և ունին օրինաւոր ատեստատներ։

Ընդունելութիւնները սկսուում է սեպտեմբերի 1-ից։ Կուրսերի ծրագիրն ու կանոնները կարելի է ստանալ ձրիապէս եղբ. Յովհաննէսների բանկային գրասենեակում և Կուրսեր հիմնողի բնակարանում։ Օտար քաղաքացիք դիմում են՝ Тифлисъ, учредителю Коммерческихъ Курсовъ С. П. Мануэльянцу.

(1053) 12—8

Տեսնելով, որ մեր առաջի տպագրած

„ԷՖԻՄԵՐՏԷ-ԵՐԱԶԱԳԻՐՔ“-Ը

սպառուած է և ամեն կողմից պահանջ և կարօտութիւն է զգացւում, տարւոյս յունուարինպէս տաւորուեցայ գիրքը երկրորդ անգամ յանձնելտպագրութեան։

«ԷՖԻՄԵՐՏԷ-ԵՐԱԶԱԳԻՐՔ»-ը, հայի անբաժան ընկերը լինելով՝ կատարում է նրա համար «Ոսկի բարեկամի» պաշտօն. այս պատճառով սկսայ բազմատեսակ և բազմակողմանի և միանգամայն կեանքի ամենահարկաւոր և օգտաւէտ գոհարներով՝ և մանաւանդ բժշկական ճոխ նիւթերով հարստացնել և բոլորի համար յիրաւի «Ոսկի բարեկամ և ոսկի ընկեր» դարձնել. և այսպէս կրկնակի օգտաւէտութեամբ մատչելի անել բոլորին։

Գիրքը իւր ստուարութեամբն առաջի տպարութեան եռապատիկն է. մի օրինակի գինը 2 բուբլի 70 կոպէկ է։

Սրտով շատ եմ յայտնել բոլորին՝ մանաւանդ մեծապատիւ նամակագիր այն պարոններին, որոնցից շատերը հատով և շատերը գումարով նախապէս ցանկութիւն են յայտնել գնելու, թող բարեհաճեն գնելը կանխիկ ուղարկել և գրքերը պոստով ստանալ։

Ապառիկ՝ ոչ հատով և ոչ գումարով ոչ որի չի ուղարկուիլ։

ԳՐԻԳՈՐ ՔԱՀԱՆԱՅ ՄԱՆԴԱԿՈՒՆԻ.

1059) 10—10

Дозв. цензурою. Тифлисъ, августа 6 го дня, 1898 г. Տպարան Ա. Ի. Պետրովի Типографія А. И. Петрова, Голов. проспектъ, домъ № 12 Телефонъ № 387.